

**Հարց** Ո՞վ է սահմանում և վերանայում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները և սակագների ձևավորման ի՞նչ սկզբունքներ են կիրառվում:

**Պատասխան** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները սահմանում և վերանայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագների ձևավորման սկզբունքներն են.

1.Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ կյուբական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը,

2. Ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը,

3. Հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,

4.Ծառայությունների տեսակներով և առանձնահատկություններով պայմանավորված սակագների տարբերակումը,

5.Հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,

6.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Փաստաթղթերի հատուկ առաքման սակագնի ձևավորման հիմքում ընկած է ծախսածածկման սկզբունքը: